

առնել զայս, համարելով այնու իսպառ իսափան լինել զալոյ կոմսին՝ ՚ի կոչն. եւ պատճառելով ինքեան հարկ կարեւոր փութով երթալոյ ՚ի Կ. Պօլիս՝ մեկնեցաւ անդր. զնաց ընդ նմա եւ առաջին նուիրակն Սոփրետոս, որ ոչ հաւանէր ընդ գործս Պետրոսի. ստգտանէր զնա եւ լռելեայն յունկն այլոց եպիսկոպոսաց, եւ համարձակապէս ՚ի ժողովի՝ իրաւացի ասէր զպահանջ դեսպանի թագաւորին, այսինքն զբանադրանս կոմսին. գոր եւ յօժարէր կատարել, եթէ միաբանէր միւս կարդինալն, ապա թէ ոչ՝ հրաժարէր ՚ի դատաստանէ աստի¹⁴⁹: Իսկ ինքն գուն գործեալ յաջողեցաւ առ վայր մի հաշտութիւն առնել ընդ թագաւորն եւ ընդ Տաճարականս. այլ սոքա դարձեալ գծտեցան եւ բողոքեցին ՚ի Հռովմ: Եւ այսպէս նախ անհաւատարմութիւն կամ անմիաբանութիւն ընկերաց Սոփրետեայ, ապա դեղեւանք մտաց Պետրոսի եւ եպիսկոպոսին Կրեմոնայ, յամառութիւն միականի կոմսին, ՚ի դերեւ հանին զպատեհ աւարտման վիճին. յորում միայն Լեւոն չափաւորապէս զիջանելով՝ վեհագոյն հանդիսացաւ, երկոքումք եւս ցուցեալ՝ զի զարդարութիւն խնդրէր եւ ինքեան էր անկ. իսկ տատամսութիւն դատաւորացն ոչ միայն պատճառք եղեն յերկարելոյ ցտասն եւ աւելի եւս ամս վիճից եւ հակառակութեանց, ծանր ծանր վնասութիւն երկոցուն վիճողացն, այլ եւ տուժիւք հեռաւոր եւ մերձաւոր արեւմտեայց Խաչակրաց, որոց ահա պատրաստ էր Լեւոն տալ յօգնականութիւն բիրս մարտկաց, որպէս եւ երբեմն նախնին իւր Թորոս, եւ յերկոսին եւս նուագս անխոհականութեամբ կամ ազահութեամբ՝ վրիպեցան Լատինք ՚ի կարեւորագոյն օժանդակութենէ Հայոց, մինչ դեռ յուժի կային սոքա, եւ չէ եւս էին վատթարեալ՝ օրինակաւ նոցին արեւմտեայց համարձակ բարուց, եւ ՚ի ստեղծ հարուածոց եգիպտական սուլտանաց, զորոց ոչ կարացին Խաչակիրքդ խորտակել զօրութիւն, առ անմիաբանութեան իւրեանց եւ անզգաստութեան:

¹⁴⁹ Tandem ego Soffredus, advocatis seorsum Domino Cardinali (Petro), Cæsariensi archiepiscopo, episcopo Cremonensi et Acconensi electo, firmiter proposui eis, quod ego coram Deo et eis de hoc facto excusatus esse volebam, et videbatur mihi pro certo, quod *instantia prædicti Nuntij justa esset et admittenda*: et ego paratus eram, si placeret Domino Cardinali, quod petebatur efficere, pro eo quod sic fuerat communi deliberatione nostra, Hierusalem Regis, Templariorum, Hospitaliorum, Baronum, peregrinorum qui Accone aderant, irrevocabiliter statum atque firmatum, nec debebat taliter et sic solemniter statum pro utilitate Christianitatis, inefficax esse et illusorium. – Թուրթ Նուիրակացն առ Պապն: